Երրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1033[1]-25.11.2010-ԱՄ-010/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (17 մայիսի 2000 թվականի, ՀՕ-60) 3-րդ հոդվածի 3-րդ մասում «դեղագործական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներում» բառերից հետո լրացնել «,բժշկական օգնության եւ սպասարկում իրականացնող լիցենզավորված անձանց մոտ՝ արյան, դրա բաղադրամասերի որակի, անվտանգության եւ փոխներարկումային բժշկական օգնության եւ սպասարկման գործունեության մասով» բառերը:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առարկությունների և առաջարկությունների մասին

Առարկության հեղինակը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արա Բաբլոյան	Երկրորդ ընթերցմամբ ընդունված «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «6.Արյան դոնորության ընթացքում արգելվում է որևէ խտրականություն՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից»	Առաջարկությունն ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
ՀՀ կառավարություն	Առաջարկվում են հետևյալ խմբագրական փոփոխությունները 1.Հոդված 13-ի 2-րդ մասից հանել «եւ այն» բառերը Նկատի ունենալով, որ հոդված հոդված 30-ի 1-ին մասի 2-րդ կետում տեղ է գտել վրիպակ, առաջարկվում է «պացիենտ» բառը փոխարինել «ռեցիպիենտ» բառով:	Առաջարկություններն ընդունվել են:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: